

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
 Պոչխարիոյ համար 10 Ֆր.  
 Վեցամսեայ 5 »  
 Արտասահմանի համար սարեկակ 12 »  
 Վեցամսեայ 6 »  
 ԿԱՆՈՒԿԱԿ ՎՃԱՒԵԼԻ  
 —)(—  
 Գրութիւնք և ս շնն արտիւր  
 —)(—  
 Իրականացան տոյր 20 սակ-  
 րիւն և և տեխնի ան-  
 զանկերու համար 20 Օլօ  
 զեղի կրուայ:

# ՇԱՐՇՈՒՄ

Նախակ եւ դրամ դրկել  
 Խմբագրութեան հասցիքի  
 —  
 Редакция на вѣстникъ  
 «Шаржумъ»  
 Варна.  
 —  
 Redaction du journal  
 «Charjoum»  
 Varna (Bulgarie).

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ОТГОВОРНИКЪ: Д-ръ Т. Хр. Стояновъ.  
 Адвокатъ

## ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

—)(—

### Հայրիկ,

Խօսողը ձեզի անձանօթ մը չէ. ձեր սրտին շատ մօտիկ ապրած, ձեզի բարեկամ ու շատ անդամ ալ խորհրդակից գտնուած է: Իսկ ինչ որ ամենէն աւելի վեր է, ազդուած է շունչովդ, հոգիովդ՝ որ քառասուն տարի պարբերաբար, գրածներուդ ու մեր տաճարներուն մէջ թրթռացած է: Աստի, իրաւամբ կը կարծէ որ թոյլ պիտի տաք իր ձայնին՝ ներս սպրդելու վեհարանին դռներու ծակուրէնքներէն. և վայրկեան մը հեռուէն ըսելու ինչ որ սովորած է ձեզմէ և ինչ որ ձեր սրտին ու հոգիին ամենէն մօտիկ ու սիրելի բաները եղած են:

Նախ չէք մոռնար որ օրը աչքէն իրիկուն է և օր մըն ալ էջմիածնի զանգակները պիտի արձագանգեն տխուր զօղանջիւնով թէ ա՛լ չկայ կաթողիկոսը: Ձեր բարեկամները, թերեւս անոնք ալ որ ձեր հակառակորդները կան, պիտի արտասուեն մարդկային կորուստի մը վրայ. ու ծա՛նր սուգ մը, սեւ վարդոյրի մը պէս, պիտի տարածուի էջմիածնի վրայ:

Քառասունքը կանցնի, սուգի ծածկոյթները քիչ քիչ կը վերանան, ախր ուրիշն ալ կը մեղմանայ մեր սիրտերուն վրայ, ու կսկսինք այնուհետեւ քննելու թէ ի՞նչ ունինք ձեռքերնիս այն անցած կեանքէն՝ որուն հոգակոյտին թարմութիւնը կը շողիանայ մեր արցունքներուն պէս:

Կը քալենք 40 տարուան գործօն կեանքէ մը. կրակի, ոսկուրութեան շրջաններէ կանցնինք, կը հանդիպինք գիրքերու, քերթուածներու, թղթի կտորուանքներու, որոնք այդ կեանքի տարածութեանը մէջ երկինքէն ինկած կայծերու պէս են: Տաճարներուն մէջ՝ կենդանի շունչ մը կուզայ կը կազդուրէ մեզ, վհաս հոգիներու ցնցում կուտայ, և, անոր ազդեցութեանը տակ, յոյսը կը բողբոջէ տերեւալից: Ու այս ամբողջը քառա-

սուն տարի, շարունակ, անդադրում, արեղայի, վարդապետի ու եպիսկոպոսի օրերուդ:

Կաթողիկոսութիւնը կուզայ: Անօրինակ խանդավառութիւն, ժողովրդային շտանուած ոգեւորութիւն. ամէն սրտէ ձայն կը բարձրանայ որ Հայրիկը էջմիածնի աթոռին վրայ նստի: Յաղթութիւնը կը մնայ ժողովրդին բուն ըզձանքներուն՝ որոնք, ամէն կէտերէ, խեղդուած կամ ազատ կորուստանան մինչև Մասիս: Ու Հայրիկը կաթողիկոս:

Այնուհետեւ կը սպասենք՝ աչքերնիս գարձուցած արարտեան աթոռին:

Ճեմարանը անշքութեան կը դատապարտուի, և Հայրիկը, որ ազատական կրօնաւոր էր, անդոյն պահպանողականութեան ձայն կուտայ, և, հակառակ խոշոր ակնկալութիւններու, փոսած կզերամտութիւն մը կը սկսի տիրաբար յոխորտալ էջմիածնի պատերուն մէջ:

Արդէն նշաւակուած խաբեբաներ, որոնք արտաքրտած էին մեր սրբաբաններէն, տեղակ մը անխորհուրդ ներդրամութեան հրատէրով ներս կը մտնեն ու, իբրեւ վարձատրութիւն, պաշտօններու զլուխ կանցնին: Իսկ օգտակար անհատներ, փոշին սաքերնէն թօթափածի պէս, գուրս կելլեն ջախջախուած իրենց սաք ակնկալութեանցը մէջ:

Պայազիտի գաղթականները կը լեցուն ինչմիածնի պատերուն տակ. ամենքն ալ նօթի, կարօտ մարդասիրական ամէն խնամքներու, և կաթողիկոսը, ձեռքը ունեցած գրամները, ողորմութիւն բաշխելու պէս, կուտայ անհաշիւ: Ու ատիկա պատճառ մը կը լլայ որ նոյառին գործը կազմէ և գալիք գրամներուն ճամբան փակուի:

Ազգային ժողովրդական վարձարանները, որոնք նոյն իսկ Մակարի ձեռքին տակ իրենց զոյտութիւնը շարունակեցին աշխարհական վարչութեան ներ-

քեւ, կը սահմանափակուին, ու բնաւ տրտունջի, դժգոհութեան թեթեւ ճիկ մը անդամ չի թըռչիր էջմիածնի վեհարանէն դուրս:

Գալով գաղթական հայոց վեհաձեռութեան գործին, ոչ մէկ հոգածութիւն. հա՛, չմոռնամ, վարդապետ մը կամ թէ անոր պէս բան մը երեւցաւ Պուլկարիոյ մէջ՝ մեզ հովուելու պաշտօնով: Չմոռնամ նաև որ մէկ երկու քաղաք զնայ, ճամբորդեց, ու, իբրեւ մխիթարութիւն հատուցեցաւ ներս, սրբազան բեմէն հայհոյեց անամօթաբար, թշնամութիւններ զրգուց ու զնայ չգիտեմ ուր տեղ հրաշագործելու:

Ասե՛ք զրուին թէ չգրուին, ինքնին կը մնան մէջտեղը իբրեւ նիւթ պատմագրութեան:

Հիմա, վեհափառ, մեր ճգնաժամի րոպէներուն, եթէ ձեռք առնէք գաղթական հայոց խնդիրը, անտարակոյս շատ պահաններ մոռցնել կուտաք մեզի. ու հայութիւնը, տարբեր եզանակով մը կորուստներ գարմանած կը լլայ: Միայն Ռուսմանեան չէ որ պէտք ունի վերածնութեան՝ Պուլկարիոյ հայութիւնն ալ տարտամ բան մըն է, երբուն, անգիտակից տարր մը, տեսակ մը ճակատագրային գոյութիւն, որ պուլկարական ուղտ հողին վրայ չէ ըմբռնած վերածնութեան հրաշալիքը իր աչքին առջև:

Ձեր աջին տակն առէք անոնք. և, շատ չանցած, պիտի տաք մեզի Ռուսմանիոյ հայութիւնը, որ քաղաքակրթութեան տարր մըն է. իր ունեցած նիւթական վիճակն ալ մեծապէս նպաստող կը լլայ վերածնութեան գործին:

Եւ այդ ամէնը մեծ զոհողութեան պէտք մըն ալ չտեսողներ, խնդիրը միտնգամ ընդ միշտ որոշել ու մշակել առանց նոյառակէն խոտորելու, — վերածնութիւն գաղթական հայութեան:

Ու հրաշալի ստեղծագործութիւն մը չըլլա՞ր, երբ, շնորհիւ, վեհափառ Հայրիկ, էջ-

միածնէ արձագանգուած ձայնի մը ազդեցութեան տակ, հայ կեանքը վերածնի հայութիւնը մոռցող տուներու մէջ. մեր կորսուած քոյրերը, մայրերը մերը ըլլան, ու անոնց աչքերուն մէջ, ցոլքերու պէս, մեր հայրենիքի ցաւերն ու կսկիծները դուրս իբրեւ զարդ:

Շարժեցէք, վեհափառ, դուք քնացած ուժեր ունիք, ձայն առէք անոնց, ձեր անցածին վրայ նայեցէք, ու բնաւ տարակոյս մի՛ ունենաք որ ձեր անուշ նայուածքին տակ պիտի տեսնէք վերածնութեան հրաշալիքը:

Կը խոստանանք ձեզի՝ ձեր գերեզմանին վրայ «վերածնութիւնը» գնել իբրեւ անթառամ պտակ:

ՇԱՐՇՈՒՄ

## Օ Ր Ը Օ Ր Ի Ն

### ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ

Լ'Առնէնի վերջին թիւին մէջ Պ. Չերազ կը յայտնէ թէ յուլիս 25ին աւարտեցաւ երեսնամեակը իր գրական գործունէութեան: Իր կողմէ եղած այս յայտարարութեան շեշտին մէջ սյառածովիկ ու միանգամայն կը շտամբող բան մը կը նշմարեմ, ուղղուած ամբողջ հայութեան, որ համակրանքի ցոյց մը չի փութար ընել իր ամէնէն անձնուրաց, ամէնէն տաղանդաւոր ու ամէնէն արդիւնաշատ գաւկնեցի մէկուն, կեանքի լայն ու լեցուն շրջանի մը բոլորումէն ետք:

Չերազ: Ի՞նչ յիշատակներ չարթնցներ այս անուշ մանաւանդ մեր նախորդ սերունդին ու քիչ մըն ալ նոր սերունդին միտքին մէջ: Հոչակաւոր եռագիտութեան — Տէմիրճիպաչեան, Պէրպլեհեան, Չերազէն փայլուն ու գործունեայ ներկայացուցիչը, երկասարկ տարիքէն սկըսած է իր շունչով տաքցունել ամբողջ նորարոյս սերունդ մը, հմայքի եւ յափշտակութեան ոլորտ մը տարածելով իր շուրջ:

Երկար կը լլայ մանրամասնել սանկ բեղմնաւոր ու օրինակելի կեանքի մը պարագաները, որոնք հարկաւ օր մը պիտի գրուին՝ մեր սպառն սերունդներուն ձգելու համար անկեղծ, անշահախնդիր, առաքինի հայու ամէնէն համակրելի սիրարներէն մէկը:

Ինծի համար, Չերազի կեանքին

*Մեքիմաստեպառա*  
*W. H. F. Fickler*

էն յիշատակալից, բեզուէն ու ար- զինաւաւէտ շրջանն եղան այն երեք տարիները զորս անցուց Ազգ. կեդ- րոնական վարժարանին մէջ, տես- չութեան պաշտօնով:

86ին էր. Պոլսոյ հայ ուսանողու- թեան, իրան ունեցաւ անհուն քա- րախումով երբ լսեց Վեդր. վարժա- րանին բացումը: Չորս դիէն վաղե- ցին, հարուստն ու ազգասէր, պար- կեզան ու անառակը, ամէն բարբէ, ամէն երանդէ: Հզօր ձեռք մը, զսպող նայուածք մը, ու ազդեցիկ խօս- ուածք մը անհրաժեշտ էր այս բաղ- մատարը ու ետացող երամակը վա- րելու համար:

Ու հիացմամբ, անջի օրէն, տե- սանք հոն ազնուականի շնորհաւէտ գէմք մը, սեւուկ մօրուսով մը սի- րունքօրէն պարարկուած, ակնոցի տակ վառող թափանցանց ու խելացի աչքերով լուսաւոր: Ու ձայն մը թաւ, ցնցող, տաք, որ ներկայա- ցող աշակերտին ուսմէն մինչեւ գլու- խը սարսուռով մը կը ծածկէր: Եւ իր ժպիտը, անհուն, սնրացատրելի ժպիտը՝ ամբողջ գէմքին վրայ ձա- ճանչաւէտ ցանուած՝ երեք տարի շա- րունակ վարեց, զսպեց, ներշնչեց, կապեց, հմայեց հարիւրաւոր աշա- կերտներ, որոնք մինչեւ այսօր իսկ անտարակոյս կը յիշեն զայն, ժպի- տը, որ դասարանի ամէնէն տազնա- պալից վայրկեաններուն ալ անջինջ կը շողար գրան շրջանակին մէջ կամ ապակիին ետեւէն: Ազդեցութիւնը շանթահարիչ էր. ժպիտ մը ամբողջ փրփրացող սրահ մը կանդամաւու- ծէր: Հոս կը կայանայ ան՝ նկա- րագրի մեծութիւնը:

Եւ պէտք է գիտնանք որ այդ սքանչելի շնչքէն իր հեռացումէն յի- տոյ ալ իրմէ շքան մը ձգեց հոն, կենդանութիւն մը, շունչ մը որ իր հեւքերուն մէջ պարուրեց անկից ե- կող անցնող բոլոր սերունդը: Ու այդ մեծ վառարանին առաջին բո- ցերը արծարծողն եղաւ Չերազ, առ- կուն: Հսպտող հրաաներ ձգելով հոն, որոնք շարունակ բռնկեցան, առանց շիջանելու, բորբոքեցան, կայծեր սրակելով չորս կողմ:

Ու դեռ մինչեւ հիմա ականջիս մէջ կը հնչէ իր որոտացող ձայնը՝ երբ հա- յոց պատմութիւն կը դասախօսէր մեզ, Ա. տարին, հարիւր քսան ա- շակերտներու, որոնք շունչերին բռնած, հեւքոտ, վերացած՝ ամբողջ ժամ մը բռնուած կը մնային անոր ձայնին, նայուածքին ու ձեռքի շնորհալի շարժումին ցանցերուն մէջ:

Նուա՞զ մեծ է իր ազգին մատու- ցած ծառայութիւնը իր Առնեկիով, որ հայութիւնը օտարին ծանօթա- ցրելու լաւագոյնն է պատշաճագոյնն օտկանն եղաւ. ու պիտի շարունակէ այնպէս:

Մինչապ Չերազի գործունէութիւնը որոշ, անուրանալի է. ազգէն զէպ անոր պարագ մը կայ երախտիքի, ինչպէս բոլոր անոնց որոնք մերա- յիններուն օգնին յատկացուցած են իրենց բոլոր կարողութիւնները:

Երեսնամեայ մեծանունն աշխատա- ւորին փութանք մեր մեծարանքի ու երախտիքի հարկը մատուցանել, զէթ բարոյապէս վարձատրած ըլ- լալու համար զինք իր նշանակելի ծառայութեանց փոխարէն:

Շարժումը կը համարձակի պուլկա- րահայ մամուլին եւ Պուլկարիտոյ ստուար գաղթականութեան կողմէ ամենաջերմ շնորհաւորութիւններ ուղղել իր մեծանունն ու անձնուէր պաշտօնակցին, ու կը մաղթէ որ

գործունէութեան այս անարատ ու վաստակալից երեսնամակը իրեն յաջորդ ունենայ աւելի փառաւոր ու ցնծալից յիանամեակ մը:

ՇԱՐԺՈՒՄ

ԼՈՒՍՆԻՆ ԴԻՄԱՅՑ

—(—)

Բոլորշի, անուշ դիւրի մը գեղանի, կուսակալ պատկեր, մակնով հոյակնի, Որ անբարեբաւ խորեհեկ հանդարտ կը նայիս շրտիկ, միակերպ գրասր:

Անհուն կասպուսին մեջ, ինչպէս շուրտից,

Ինկած կը ծրփաս շոյներովոյ յորդ, Եւ անպի քեթեւ ծրփեմէն անհուն Մեօփից ժապաւեկն եւ վրդիոյ ժանեակ:

Նայուածքով ֆեզի կը կախուիս ա- նուշ,

Միեջիւր աշխարհ մեջ կը կրկնուի ուժ. կը նրստիս յետոյ շոյից սակ, կորած Անուրջներու մեջ պատկերից յիւնաց:

Ճերմակ երազներ կը քայլես անուշ, Հիւսուած յոյճերից ու շոյեցի ֆրե- ֆուշ,

—Ըսպիտակ, մաքուր աղաւնի քեթեւ, կանաչն անդրու մը վրայ շարտիք:

Մովն ոսֆերուց սակ կը հագնի շը- դարշ,

Եւ ծուխներուն մեջ կարքերեայ մեղով շարժ,

—Օրոր մը անհուն՝ ուր ժայռեր խա- դար,

Կերակուն անուշ՝ գրչուխիկն առկախ:

Կնակն ձրեկն ան յուսիկ. բայց դուն չես մոռցած

Որ—գացած օրեր—միեջ ֆիզով զի- րուած,

Գերից կրչայի՝ աշխարհի կախի, Մոռցած անկե ցաւ, մոռցած անկե քախ:

Ոգի մը յանկարծ անկեցաւ ֆոյխ, Փայտուն շոյներով, գուռնս ֆեզի պիւս, Եւ դուն, երկրեմի պատկեր յուսեղիկ, Մարեցաւ աշխարհ, չբխացաւ մեկիկ:

Դուն առանձնութեան հուրիկն եւ միակ,

Մաղան սրբեղուն յափտից միակ, —Պատմակ մը յուսի կաւ անհուն շարտիք

Սեւերու վրայ փրոտած յուսակեր: 2.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռուսչոյ, 26 Յուլիս

Տեղւոյս ազգային վարժարաննե- րու Բ. դասարանին տղաքը մօտերս պիտի ներկայացնեն Դուրեանի «Աս- պատակութիւն» Պարսից ի Հայոց» թատերգութիւնը ուսկից գոյացած հասոյթը պիտի յատկացուի աղքատ աշակերտներու եւ աշակերտուհիներու դասական պիտոյքներու հայ- թայթմանը: Այս եռանդուն պատանի- ներուն ձեռնարկը ամէն գովասանքի եւ իրախումբի արժանի է, որով- հետեւ անոնք տակաւին իրենց զի- տաբոյս հաջակին մէջ կը գտնուի ի- րենք իրնչ բարոյական պարտակա- նութիւններ ունին զէպի իրենց չքաւոր բնկերները եւ ընկերուհի- ները: Արդէն անցեալ ուսուցման տարուան մէջ Սանուց եւ Սանուհեաց ընկերութիւններն էին որ ոչ միայն 50է աւելի չքաւորներու դասական պիտոյքները կը հոգային, այլ եւ ի հարկին նոյն իսկ հանդերձներ կը բաշխէին: Յոյս ունինք որ Ռուս- չուքի արգոյ հասարակութիւնը իր

առատաձեռնութեամբ ալ աւելի մի- ջոց պիտի ստայ այդ պարտաճանաչ պատանիներուն իրենց պարտակա- նութիւնը աւելի ընդարձակ սահ- մաններու մէջ կատարելու:

Երկուսն զպրօնները այս տարի ա- լելի կանոնաւոր փրճակի մէջ պիտի մտնեն՝ աչքի առաջ ունենալով որ ուսուցչական խումբի կազմակեր- պութիւնը թողուած է Պրն. Սապահ- Գիւլեանի: Առ այժմ որոշուած է պուլկարեքէն լեզուի համար, փոխա- նակ պուլկար ուսուցչի եւ ուսուցչ- շուհիի, բերել այնպիսի ուսուցչի- ներ որոնք պուլկարեքէն լեզուի հետ նաեւ գիտնան հայերէն: Մինչեւ ցարդ, զժրատարար զպրօնները ա- ռաջնորդուելով այն խալ զազափա- րով թէ՛ օտարական մը կրնայ աւելի լաւ սորվեցնել իր լեզուն, այդ ա- ռարկայի համար վարձած են միշտ պուլկար եւ պուլկարուհի, որոնց հայերէն լեզուի անգիտութիւնը միշտ պատճառ եղած է հակամանկավարժա- կան ուղղութեան, որ այսօր վեր- ցաւ: 2ԱՅԿԱԿ

Ֆրեզու (Աւերիկա), 20 Յուլիս

Տեղւոյս հայ գաղթականութիւնն երթալով կը շատնայ ու կը մօտենայ չորս հարիւր երեսունի: Ամերիկայի ուրիշ հայաբնակ քաղաքներուն վրայ Ֆրեզու սա առաւելութիւնը ունի որ հոս նախ ամէն մարդ իր գործով կը զբաղի եւ յետոյ կը մասնակցի քա- ղաքական գործերու:

Այս տարի, Ամերիկայի անկախու- թեան տարեկարծին առթիւ կատու- վարական հրաւերով հայ գաղթակա- նութիւնն ալ մասնակցեցաւ հան- դէսներուն: Հանդիսագիր խումբ մը ընտրուեցաւ հօթը հոգիէ, որոնք շատ խորհրդաւոր ու շքեղ թափօր մը կազմեցին մէկ շարժումն մէջ: Թա- փօրը սապէս կազմուած էր. քսաներ- կու ռաք երկայն ու տասնհինգ ռաք լայն սայլի մը վրայ քսանըմկուկիկ ռաք բարձրութեամբ չորս սիւներ հաստատուեցան զմեթածեւ, որուն գագաթը թեւատարած կը սաւառէր ռակեզօձ արծիւը, խորհրդանշան Ընքը Սամի. զրօշաղարգ գմբեթին վրայ զետեղուած էին բացի Ուա- շինկթընի պատկերէն՝ օրուան հե- րոսներուն պատկերները, Սամուրն, Տուի, Հըպարն: Միւսները ծածկուած էին հայրենիքի հին յիշատակներ ներկայացնող պարսկական զօտինե- րով, իսկ սայլին յատակը փոռած էին թանկագին գորգեր հօթն ա- թոսներով, որոնց վրայ բազմած էին վեց մեծ տէրութիւնները ներկայա- ցընող վեց հայեր, յատուկ ապաղ- չներ հագած. իսկ հօթներով աթո- սին վրայ բազմած հայը կը ներկա- յացնէր Ընքը Սամը, ձեռքը հօթը ռաք երկայնութեամբ սուր մը, զոր երկնցուցած է միւսներուն զլիւտն վրայ, եւ որուն վրայ փորագրուած է յաղաղութիւնն եւ արդարութիւն:

Թափօրին կառավարողէին նժոյգ- ներու վրայ հեծած երկու մարա- ջախտներ. իսկ կը հետեւէին չորս ձիաւորներ, որոնց երկուքը կը ներ- կայացնէին հայ թաղաւորներ՝ ար- քայական հանդերձանքով ու զրահ- ներով. ուսերուն վրայ կը կրէին հայ ու ամերիկեան գրոշներ. միւս երկու ձիաւորներին մէկը հայ աս- պատակի, իսկ միւսը ալպանիացի տարաղ հագած էին:

Ընդհ. մարաջախտի անօրինու- թեամբ հայկական թափօրը առաջ անցաւ բոլոր միւս թափօրներէն, ձակաւոր կրելով «Արմենիան ֆրոյս» խոշոր տառերով: Անասնման, որո-

տագին ծափեր կը տեղային հայկա- կան թափօրին վրայ. թերթերու թղթակիցներ զգուշաբար կը մօտե- նային, բացատրութիւն կուզէին:

Ամերիկայի մէջ հայերը առանկ ու գեւորիչ ցոյցեր ալ կը սարքեն:

ԲԻՒՋԱՆԴ ՍԱՌՈՒՆԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԻՇԱՍԱԿՆԵՐ

—(—)

Աղբիւրը կը հոսի Գարունց հայ գիւղէն բաւական հեռաւորութեամբ կանանչ լեռան մը սրահէն. իր բը- խուած, իր գլխքը ու իր սեղը՝ ան- սարանի ընդարձակութեան ու այ- լազանութեան հետ ամենանիւնալի ըլլալով, քիչ շատ սերտ ու միաք կրող այցելուի մը վրայ աննկարա- գրելի տպաւորութիւն մը կը թողու 1884 սեպ. 12ին, երբ դեռ Հայաս- տանի ազօթաբանի աստղը—արուս- եակ—լեռնային իրազանի ու Շինի- ձորի բարձր լեռանց վրայ շինուած իրազանի Ս. խաչ վանքի կաթողի- կէի վրայէն սահելով կուգար անե- րեւութանալ աղօթարանի մթնշա- ղի հետ, երբ «Մոկաց» անուշ քա- մին իրազանի բարձր սարերի գլուխ- ները քերելով ու անառախիտ լեռ- ների թաւաւանները շարժելով հայ- րենիքի անարատ հողին վրայ սրբա- ցած կուգար արթնցնել Հայաստանի թաղանջների սիրուն հոյութը, որոնք Շնորհալիի ներգաշակութեամբ, մեր սիրելի հայրենիքը «զարթիք» կը զեղգեղէին, կըր այդ աղբիւրի առատութեան շուրջ իրենց վրան- ները—կրեւս—հաստատած Մլան- ցի քաղթների (աշիւթ) խուժանը տակաւ իր կազմուելի քուռնէն ար- թընալով, էրկ մարդիկ իրենց սի- րելի զէնքերը փայլեցնելու ու սրե- լու, իսկ կրեւրը՝ անասուններուն կաթերը կթելու ու իրենց հօտերը հեռու արօտավայրեր քշելու աշխա- տութեան մէջն էին, մենք երեք ընկերով ու երկու ուղեցոյցով յոգ- նած ու պարտասած, առաւօտեան զով ու կենսատու քամուն հետ այդ աղբիւրի վրայ կուգանք հանդիլու:

Ամբողջ գիւղերը Տատիկ գաւառի գաշալը, Կալհոկայ հանգին սարը, ու իրազան Տատիկէն անջրպետող մի- ջոցը՝ երբեմն քալելով ու երբեմն ձի նստելով—ձամբան այնպիսի գօտաբ- անց տեղեր ունի որ միշտ ձիով անկարելի է ընթանալ—առտուան մութնուլուսին եկանք հասանք այդ աղբիւրին քով: Հոս անհրաժեշտ է ուրեմն նստիլ ու հանգիստ առնելով նաեւ հետաքրքրուիլ:

Մեր ուղեցոյց Իսօն որ չլու հրձ- մանակատար քիւրա մըն է, շուտով նստելու սեղ կը պատրաստէ. կու- գանք կը բողբոլիք այդ սեղ, կը բանանք մեր պաշարը ու գինիի տեղ կը գործածենք Գարունից ական ա- նապակ ջուրը որ իր բնական մաք- րութեամբ ու պարզութեամբ պր- օսոյնն ու շամբանիայէն գերազան- ցապէս կազմուելի է. որքան կրնաք կեր ամէնէն ուսկից կերակուրները, գաւաթ մը այդ ական արծաթափալ պաղ ջուրէն անմիջապէս կը թեթե- ցնէ ստամոքսիդ բեռը, բան չունի- նէ կեր ու կեր:

Երբ աղէկ մը կըտացած ու լաւ մը կազմուելու մտքով կը սեւեռենք մեր աչքերը հորիզոնի սարածու- թեամբ նշմարող շէն ու անյնչ զրկերուն, վանքերուն ու վայրե- րուն վրայ, ալ մեր հարցմանց կաթ չը կայ: Այս բարձրութեանէն զիտու- ղին աչքին հորիզոնը այսպէս կը տարածուի. հիւսիսէն իրօրտայ, Ուրանից ու կեցանի քարերը, արե-

ւելքն լեռնային իրզանի, Շինիճո-  
րի ու Սպարկեբրի լեռանց գա-  
զաթները, հարաւէն Պէրվարիի ու  
զալառային իրզանի այն մասերը ու  
լեռները կը նշմարուին ուր կը սա-  
րածին նաեւ ընդարձակ ու բոլորչի  
գորգորիկ գալաթի մը մէջ իրզանի  
հայկական աւերակ քաղաքի հսկայ  
բեկորները. մեր դիմաց՝ աչք կը տ-  
րելու հեռաւորութեամբ կը տեսնու-  
ւին, Տարունց, Բրունց, վերին ու  
ներքին Գարասու հայ գիւղերը,  
Կամաղելի ու Եօթիտրոնայ վան-  
քերը, իրենց կենդանի ու թարմ  
յիշատակներով, ու հոգեկան այն  
անբացարկելի տպաւորութիւնը զոր  
կը կրենք սուսօտեան արեւածագին  
հետ հայրենիքի անմոռաց յիշատակ-  
ներովն ու աւերակներովը լի այդ  
տեսարանին հանդէպ Տարունց ա-  
կան կարկաշատ աղբիւրի ջուր-  
բէն կազմուած սիրուն առուակներ  
հետ, մեր սիրուն ու միաքը խելով  
կանխանցնէ զմեզ, ու հոգիի ամենա-  
ծանր սեղմումով կը դիտենք այդ  
ամէն տխուր իրականութիւնները:

ՊԵՏ

(Շորունակնիչի)

« Ա Ն Ա Ն Ի Տ »

Պ. Արշակ Չօպանեան Բարիդէն  
խմբագրութեանս զրկած է իր  
հրատարակելիք «Անահիտ» հան-  
դէսին ծրագիրը, որ պիտի պա-  
րունակէ. 1. Աւսումնասիրութիւն-  
ներ հայ ժողովուրդին պատմու-  
թեան, գրականութեան, գեղար-  
ուեստին ու լեզուին վրայ, և  
տեսութիւններ անոր ներկայ բա-  
րոյական և նիւթական կացու-  
թեան մասին. 2. Աւսումնասիրու-

ԼԵՀԱՍԱՆԻ ՀԱՅԵՐԸ

Այս կորսուած հայ գաղթակա-  
նութեան մասին «Լաւմենի»-ի  
վերջին թիւին մէջ շահեկան  
յօդուած մը կայ ուսկից կը քա-  
ղենք հետեւեալ մասերը:  
Հայերը Լեհաստան եկան Անիի  
կործանումէն ետքը: Նախ հաւ-  
տատուեցան ութթէն հողին վը-  
րայ: Թէտոտը Տիմիթրովիչ իշ-  
խանը մեծ արտօնութիւններ  
չնորհեց անոնց, որոնք յետոյ  
վաւերացան Լեհաստանի արքայ  
Լատիսլաւ Գ.ի կողմէ: Լեհագեր-  
կի գիւնական գրութիւնները  
կը ցուցնեն թէ ալս քաղաքին  
հիմնադիր Դանիէլ արքան թոյլ  
տուաւ հայոց հաստատուել իր  
ոստանին մէջ: 1367ին, Մեծն  
Քաղիմիր, արքան Լեհաստանի,  
թոյլ տուաւ որ հայ եպիսկոպոս  
մըն ալ ունենան: Լեհագերկի  
հայկական փառաւոր մայր եկե-  
ղեցին, որուն ճարտարապետու-  
թիւնը կը յիշեցնէ մայր հայրե-  
նիքին պատմական ժամանակնե-  
րը, Լեհագերկի էն հին եկեղե-  
ցին է: Կիլիկիոյ թագաւորու-  
թեան կործանումէն յետոյ նո-  
րանոր գաղթականներ եկան  
կրկնապատկել Լեհագերկի հայոց  
թիւը: Այս քաղաք հայ շարժ-  
ման կեդրոն եղաւ: Աւրիչ քա-

թիւններ գեղարուեստական, գի-  
տական և բնկերային ընդհանուր  
ինդիքներու վրայ. 3. Թարգմա-  
նութիւններ օտար հին և նոր  
մասնադրութեանց ամենէն կա-  
րեւոր հրաշակերտներուն. 4. Վէ-  
պեր, վիպակներ և բանաստեղ-  
ծութիւններ ազգային կամ առ-  
հասարակ արեւելեան կեանքէ.  
5. Ոտանաոտը և արձակ գրու-  
թիւններ՝ գրական ամէն սեռէ.  
6. Հրատարակութիւն և ուսում-  
նասիրութիւն հին ու նոր հայ  
ժողովուրդական բանաստեղծու-  
թեանց, սուանդութեանց և հէ-  
քեթիւններու: «Անահիտ» պիտի  
ձգտի մասնաւորապէս «ազգային»  
գրականութիւնը զարգացնել զուտ  
հայ տարրերով:

Կրտսէ թէ պապական իրա-  
զէտներու, արուեստագէտներու  
և գիտնականներու խումբի մը  
աջակցութիւնը:

Ա. թիւը հրատարակ պիտի ել-  
լայ նոյնմբեր 1ին: Բաժանորդ-  
ագիրնը պիտի ըլլայ տարեկան  
12 ֆրանք և վեցամսեայ 6 ֆրանք՝  
օտար երկիրներու համար, 10  
ֆրանք և 5 ֆրանք Ֆրանսայի  
համար:

Հասցէն Paris, 6, place de l'odéon

Ք Ր Ո Ն Ի Կ

Դատական նախարարութիւնը  
պատրիարքարանի անդեկու-  
թիւնները և կարծիքը խնդրեր

զար մը, ուր հայերը սիրեցին  
տեղաւորուիլ, Կամիէնիք—Թո-  
տուլքի քաղաքն է, որ այսօր կը  
պատկանի Ռուսիոյ:

Լեհաստան գաղթող հայերը  
գրեթէ ամէնքն ալ ազնուական  
էին: Անոնց մէջ կային հա-  
րուստ մեծատուններ, որոնք զօր-  
քեր, ծառաներ, գանձեր ունե-  
ին: Կրտսէի նոյն իսկ թէ Ապրա-  
րովիչ ընտանիքը կը սերի հայ  
արքայական ընտանիքէ մը: Ու-  
մանք կը կարծեն թէ Լեհաստա-  
նի պատմութեան մէջ ամէնէն  
փառապանծ ընտանիքներէն մէ-  
կը՝ Սարիէհա իշխանները հայ  
ծնունդ ունին:

Մեղքիսեղեկ Պատրիարքը 1624  
ին Լեհագերկի երթալով եպիսկո-  
պոս օժեր է երիտասարդ սարկա-  
ւազ մը, նիքօլա Թորոսիէվիչ:  
Ասիկա կաթողիկ եկեղեցիին փա-  
րարը մտաւ և Իււպէն Ը. անոր  
ինչպէս և իր յաջորդներուն  
տուաւ արքեպիսկոպոս տիտղոսը:  
Թորոսիւիչ արքեպիսկոպոսը շատ  
գծուարութեամբ յաջողեցաւ Լե-  
հաստանի հայերը միացնել հոռ-  
մէական եկեղեցիին:

Հայերը Լեհաստանի տուին գի-  
տուններ, բանաստեղծներ, գրա-  
գէտներ և գիւնագէտներ: Լե-  
հաստանի թագաւորները զանոնք  
թարգման կրնորէին իրենց յա-  
րարեութիւններուն մէջ թուրք

է Իտալիոյ Անգոնա քաղաքին  
որբանոցին հայ որբերուն նկատ-  
մամբ: Պատրիարքարանն ալ ու-  
րոշեր է իր գիւպցածը տեղեկա-  
գրել:

Թուրք իշխանութեանց այս  
շահագորգումը գէպի իր անթիւ  
զոհերու մէկ մասը՝ այնչափ ան-  
բնական է որ ճշմարիտ ապշու-  
թիւն կը պատճառէ:

Մեծ Երեւոնիին մահուան  
առթիւ Ֆիլիպէի հայերուն կող-  
մէն քաշուած ցաւակցական հե-  
ռագրին առթիւ, Տիկին Կլատու-  
գոն հետեւեալ կերպով պատառ-  
խանած է. «Մր. Կլատուգոնի ըն-  
տանիքը իր ջերմ շնորհակալի-  
քը կը յայտնէ համակրութեան  
այն հեռագրին համար զոր ըս-  
տացած է և զոր ջերմապէս կը  
գնահատէ»:

Խառգիւղի ազգային վարժա-  
րանն ուսուցիչներէն Տ. Մ. Թէր-  
զիւնան անցեալ ԳՅ. դիշեր անձ-  
նապան եղեր է իր տանը մէջ,  
գիշեր ատեն, իր տարաբախտ  
կիւնը պատրուակով մը զրացիին  
տունը զրկելէ ետքը: Յետին  
ծայր թշուառութիւնը պատճառ  
եղած է այս յուսահատական  
քայլին: Երեք զաւակներու տէր  
էր և չէր կըցած իր բաւական  
կարեւոր աննելիքները գանձել  
թաղ. օնաուկէն: Իր աշակերտ-  
ները մէջերնին հանգանակու-  
թիւն մը կատարելով հոգացեր  
են իրենց ուսուցչին յուղարկա-  
ւորութեան ծախքը: Ուսուցիչ-

Սուլթաններուն, պարսից շահե-  
րուն, թաթար խաներուն հետ:  
Հայերը նմանապէս փայլեցան  
առեւտուրի մէջ: Հովուական բա-  
նաստեղծութեան ճշմարիտ վար-  
պետները, որոնցմով իրօք կը  
պարծի լեհ գրականութիւնը ժե-  
զարու, երկու հայեր են. Զիմ-  
րովիչ և Սիմոնովիչ: Լեհաստան  
ունի այսօր երկու հայ նկարչի-  
ներ, որոնց գործերը շատ հա-  
նուեցան 89ի ցուցահանդէսին:

Պ. Ապկարովիչ, ժամանակակից  
Լեհաստանի լատաղոյն գրագէտ-  
ներէն մէկը, ծնունդով հայ է:  
Նոյնպէս ծննդեամբ հայ են, Կա-  
լիցիոյ երկաթուղիներուն տնօ-  
րէն Տէյմա, Կալիցիոյ հեռագրա-  
տան և նամակատան տնօրէն Պ.  
Սէֆէրովիչ, գաղափարներու նա-  
խագահ Ն. Վսեմովիւն Ս. Սի-  
մոնովիչ, պառսն Զիմոնովիչ  
նախագահ Սուչավաի գառա-  
րանին: Վարչաւարի հոշակա-  
ւոր մարդասէր Պ. Քրապան, որ  
քիչ ասանէ ի վեր մեռած է,  
նոյնպէս հայ էր: Խորհրդարա-  
նին մէջ տասը հայ անդամներ  
կան: Փրանց Եղեֆ կայսր Կալի-  
ցիոյ կառավարիչ անուանեց յոյժ  
չափաւոր երիտասարդ մը կոմս  
Իրինիսքի, որուն մայրը լեհ  
հայուհի մըն էր:

Շատ հայ ընտանիքներ կապ-  
ուած են լեհ ազնուականութեան

ները թշուառութենէ անձնաս-  
պան կըլլան մեր մէջ և գեռ  
ազգը լաւ, անձնուէր ուսուցիչ-  
ներ կը փնտռէ...

Ռուս կառավարութեան վեր-  
ջին ամէնակուլ հրամանագրին  
վրայ հայ հասարակութեան  
կողմէն Ռուս կրթ. տեսչու-  
թեան փոխանցուած ազգային  
կարուածներուն արժէքն է 2  
միլիոն ուսույլ. այսինքն՝ 220,000  
սակիի չափ: Ռուս իշխանութեանց  
ձեռքը անցած գարոցներուն  
թիւը 240 հատ է 30,000 երկ-  
սեռ աշակերտներով և 1200  
գաղափարով և վարժուհիով: Կե-  
րեւակայէ՞ք ասկէց աւելի տը-  
խուր վիճակագիր:

Միւրա Մոհսին խանի  
Պարսկաստանի եպարքոս ան-  
ուանուիլը, հայկական տեսակէ-  
տով տխուր տպաւորութիւն մը թո-  
ղած էր հայ թերթերու մէկ մա-  
սին վրայ: Պոլսոյ նախկին պարս-  
դեսպանին կարի կրօնասիրու-  
թիւնը և Սուլթանին հետ ունե-  
ցած մտերմութիւնը կը թելադ-  
րէին այդ աննպաստ խոհերը:

«Լ'Առմենի» յիշելով Միւրա  
Մոհսին խանի ունեցած խորին  
բարեկամութիւնը գէպի ներսէս  
պատրիարքը, ինչպէս նաեւ այլ  
և այլ առիթներով հայ կրթ.  
հաստատութեանց նկատմամբ  
ցոյց տուած բարեսցակամութիւնը  
անտեղի կը համարի արտայայ-  
տուած վախերը, և հաւաստիք  
մը կը տեսնայ թէ Պարսկաստա-

հետ: Երկու Պառոն Ռոմասքան-  
ներ կան, որոնք կապուած են  
երկրին ամէնէն բարձր ազնուա-  
կանութեան հետ: Պ. Միքուլին,  
որուն մեռնիլը շատ չընեն, նա-  
խորդներուն պէս ի ծնէ հայ էր:  
Երեւելի երաժիշտ մըն էր, դաշ-  
նակահար, նուագահան, տնօրէն  
քոնսէրվատուառի: Պ. Թէտոտրո-  
վիչ շուրթակահար մըն է որ այժմ  
նուագապան է Պեռլինի երա-  
ժըշտասիրական օւ.քէսպրին:  
Մտադիր է նուագահանդէսներ  
ուսլ Փարիզ և Լոնտոն:

Լեհաստանի հայ-կաթողիկ կը-  
ղերն ալ նշանաւոր անդամներ  
ունեցած է. ինչպէս Սթէֆանու-  
վիչ արքեպիսկոպոս, Անտոնիէ-  
վիչ քահանան, մեծանուն ա-  
տենախօս և բանաստեղծ, Իսա-  
հակ Իսակովիչ, արքեպիսկո-  
պոս Լեհագերկի, նշանաւոր քա-  
րողիչ:

Սուչավա 1000 հայ բնակիչ  
ունի, գարոցով ու եկեղեցիներ-  
ով: Կը սիրեն հայերէն խօսիլ  
և պահել գեռ իրենց աւանդու-  
թիւնները: Իսաքովիչ ուղեց  
կաթողիկ ընել զանոնք, բայց  
մերժեցին: Կալիցիոյ հայոց  
թիւն է 4000, Հունգարոյ՝ 10  
հազար:

—)(—

նի հայերը իր համակրանքը պիտի վայելեն :

—Յայտնի է որ վեհ. կաթողիկոս Ամերիկայի հովիւ նշանակած էր Սարաճեան Յովսէփ վարդապետը : Այս ընտրութիւն հեռագրով հաղորդուել է Նիւ Եորքի հայոց : Սակայն ընդհանուր ժողովը յետ վիճարանութեան մէկի դէմ 47 քուէով մերժեց է այս ընտրութիւնը : «Տիգրիս» այս լուրը տալով կըսէ թէ Ամերիկայի հայոց ընդհ. հովուութեան պաշտօնը այնքան ծանր ու կնճառ գործ է որ զայն վարելու կարող մարդ միայն Խորէն եպիսկոպոս Ստեփանէ մը կրնայ ըլլալ : Եւ զայն կը պահանջէ :

—Ուստի (Ամերիկա) ամէն շաբթու հայեր խմբովին հայրենիք կը դառնան : Այս վերադարձողներուն մեծ մասը հայ գեղացիներ են, որոնք հետեւին արժէքաւոր ընծաներ կը տանին՝ նուիրելու համար իրենց գեղին թուրք աղային կամ բէկին :

—Գոհութեամբ կը լսենք թէ բուսնուրի հեռագրատան պաշտօնեայ Տ. Գրիգոր Մինասեան պուլկար կառավարութեան ըստացած է «Քաղաքային արժանեաց պատուանշան», իր երկարամեայ արդիւնաւոր ու բարեք ծառայութեանցը համար :

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ**

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Եմէնէ եկած վերջին լուրերը կը տեսնենք Ապուլլահ փաշա յաջողք է նուաճել ապստամբները և թէ բարենորոգմանց յանձնաժողովը փութալանութեամբ կաշխատի : Միակ թշնամին որուն դէմ հարկ է կուսել, սովին է որ կրնայ նոր շարժման մը տեղի տալ : Ապուլլահ փաշան ունեցած 50 վաշտերը կը բաւեն բարեկարգութիւնը սրահպանելու :

—Թուրքիոյ հանրային պարտքի վարչութեան անգամներուն մէջ համաձայնութիւն մը գոյացած է Ռուսիոյ պատերազմական յետնեայ սուղանքին վճարման երաշխաւորութեանը մասին :

Վերջին հեռագրի մը նայելով հանրային պարտքի վարչութեան ընդհ. ժողովի պատուիրակներուն մեծամասնութիւնը հակառակ է Ռուսիոյ պատերազմական սուղանքին վճարման երաշխաւորութեանը համար Գրան առաջարկած պայմաններուն . Գրան ալ կը հակառակի մէկ քանի պատուիրակներուն առաջարկութեանց, անանկ որ երկպառակութիւն մը վերահաս է յիշեալ վարչութեան պատուիրակներուն մէջ :

—Յունաստանի նախորդ նախարարապետ Պ. Ռալլի որ Պոլիս կը գտնուէր, հելլեն հիպատոս

արանի Ա. թարգմանին հետ սեւաւորութիւնը հանդէսին զայցերէ հըրաւիրուել է Սուլթանին ներկայանալ, որ իր անկեղծ(°) զգացումները յայտնելու է Ռուսաստանի թագաւորին, թագուհիին ու ընտանիքին համար : Պ. Ռալլի՝ օտմ. Ա. պատուանշան մըն ալ առնելով Գարլուպա պապեր է «քէֆ» ընելու :

—Ոտտիկան-լիւուորաց խումբ մը զէնքեր և յեղափոխական թուղթեր գրաւելու համար Ռալլի Ախլաթ գաւառակին մէջ խուղարկութիւններ կատարած ատեն, հարստահարութիւններ ըրեր են հայերուն վրայ :

**Պ Ա Տ Յ Ի Ա Չ Մ Ը**

Մինչ մէկ կողմէ պատերազմը հաշտութեան բանակցութիւնները տեղի կունենան, միւս կողմէ Մ. Նահանգներու ժողային ու ցամաքային զօրութիւնները շեն թուլանար գործելէ :

Սպանիա լիովին կընդունի Ամերիկայի առաջարկած հաշտութեան պայմանները : Ուաշինգթոնի ֆրանսական դեսպան Պ. Քանյոն Մաք Քինլի նախագահին պաշտօնագէտ հաղորդեր է Սպանիոյ կառավարութեան այս որոշումը : Յայտնի չէ թէ ինչպէս պատրաստուած էր սպանիական ծանուցագիրը, որ բոլորովին զազանի պահուած է : Անշուշտ Սպանիա միայն սկզբունքով կընդունի հաշտութեան պայմանները, երոնց վրայ հարձկաւ րացատրութիւններ պիտի ուղէ :

Պ. Միլվիլա, զօրավար Վէյլէր, Սալմերոն, մարաշախտ Քամբոս և ուրիշ կարեւոր պետական մարդիկ հաւանած են հաշտութեան պայմաններուն և ընդունելի դատած են զանոնք Սպանիոյ համար :

—Փիլիպպեաներուն մէջ Մ. Նահանգներու յառաջխաղացութեան մեծագոյն արգելքն այժմ ապտամբներուն թշնամական միտումն է ընդդէմ իրենց փրկարարներուն : Ակուինալտո, Փիլիպպեաններու ապստամբապետը ամէն յարաբերութիւն խրած է ամերիկացիներուն հետ : Գծտութիւնը կատարել է :

«Թայմզ» թղթակիցը այս ծանր խնդրին վրայ խօսելով ամերիկացոց կը վերագրէ այս ըմբոստութեան յանցանքը . զէնք ու ռազմամթերք տալու չէին ապստամբներուն . եղբակացներով կըսէ թէ պէտք է որ Փիլիպպեանները Մ. Նահանգաց իշխանութեան ներքեւ իյնան, որպէսզի այդ երկիր բոլորովին խաղաղի : Ակուինալտո արհամարհած է ամերիկացի հրամանատարները և ծանուցած է անոնց թէ երբ սպանիացիք յանձնեն Մանիլան, ինք պիտի պաշտպանէ զայն ամերիկեան բանակին դէմ :

Ամերիկեան կառավարութիւնը ընտած է ֆրանսական թրանսալանդիկ «Օլիւս-Ռոտրիկ» սուբհանդակ շոգենաւը՝ բազմաթիւ ուղեւորներով, բնով ու ֆրանսական պաշտօնական սուբհանդակով, պաշարման գիծը բաւարարած ըլլալու առարկութեամբ : Գրամած է նաեւ «Մանուպիան» : Այս երկու խոշոր նուեր վար դրուած են ի Գարլութիւն, ու գործը քննուելու վրայ է :

**Խ Ո Ւ Ն Լ Ո Ւ Ր Ե Ր**

Ֆէրտինանա իշխանն ու իշխանուհին որոնք այժմ այցելած Սեւեռան իշխանին շատ հաւանորէն Կ. Պոլիս պիտի երթան Սոֆիա դառնալէ առաջ, դեռահաս Պուրիս իշխանը Սուլթանին ներկայացնելու համար . յետոյ ամրան մնացեալ մասը պիտի անցունեն Էօքսինոկրատ պալատին մէջ, Վառնաի մօտ :

—«Թայմզ» թարգման թղթակիցը արժանահաս աղբիւրէ կիմանայ հետեւեալը .

Պարսիկ կառավարութիւնը ժամանակէ մը ի վեր դրամական նեղութիւն ունենալով պարսկական պանքային միջոցաւ օգնութիւն սկսեց անգլիացի դրամատէրներու խմբակէ մը, փոխառութեան մը համար իրեն և բաշխաւորութիւն՝ հար. Պարսկաստանի մարային հասոյթը ցուցնելով : Անգլ. կառավարութիւնը կը վաւերացնէր բանակցութիւնները և փոխառութիւնը, որ 1,200,000 ֆրանքի կը հասնի, արագութեամբ ստորագրուած էր արգէն Լոնտոնի մէջ . կը մնար միայն պարսիկ կառավարութեան ստորագրութիւնը պայմանագրին ներքեւ, երբ Ռուսիա գործը իմացաւ : Թէհրանի ռուս դեսպանը անմիջապէս և կտրուկ կերպով արգելեց պարսիկ կառավարութեան ստորագրել պայմանագիրը, իր կառավարութեան կողմէ առաջարկելով աւելի մեծ գումար մը փոխ տալ՝ ըստ Պարսկաստանի մարտերուն հասոյթին և բաշխաւորութեամբը : Թէհրանէն եկած վերջին լուրին նայելով, եթէ Անգլիա աղբու ճնշում մը չբանցնէ, Պարսկաստան երկու առաջարկներն ալ պիտի մերժէ :

—Յուլիս 25ին Բարիզի պատժական ատենին առջեւ տեղի ունեցաւ Զօրի դատը «Բըթի ժուռնալ»ի դէմ, որ զրազէտին հայրը վատահամբաւ գրուածներ հրատարակած էր : Դատարանը, յետ դատավարութեան, յօգուածագիր ժուռնէն դատապարտեց 2000 ֆրանք տուգանքի, լրագրին տնօրէն Մառլինոնին՝ 500 ֆրանք, պատասխանատու Լասէօնը 500 ֆրանք : Դատապարտեց զանոնք նաեւ համերաշխարար 5000 ֆր. Ֆլասի հատուցման, «Բըթի ժուռնալ»ի մէջ մէկ, և ուրիշ թերթերու մէջ տասն հրատարակութեանց :

**Ն. ՍԻՍՏԱԿԵԱՆ**  
Նկարիչ-Լուսանկարիչ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան թէ Տօպրիչի միջլուսանկարչատուն մը հաստատած է ուր բացի ամէն մեծութեամբ լուսանկարներէ, կը պատրաստէ նաև իւզաներկ եւ զարաքալէմ պատկերներ :

Սյլ եւ այլ քաղաքներէ անոնք որ կը փափաքին իրենց իւզաներկ կամ քարաքալէմ պատկեր ունենալ, փափկութեամբ եւ ճշգրիտ նմանութեամբ գծուած, թող փութան զրկել իրենց լուսանկարը յիշեալ լուսանկարչատունը : Գիները յոյժ չափաւոր : 2-10

**ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ**

**Ս. ՍԱՊԱՆ-ԳԻՒԼԵԱՆ**

ԵՒՐՈՊԱՅԻ ԿԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆՔԸ ԲԵՐԼԻՆԻ ԱՇԽԱՏԴՐՈՒԹԻՒՆՑ ԳԵՏՈՑ

—(—)

Գին : ՅՐԱՆԻՔ

Կը վաճառուի Շարժումի խմբաբաժնի :

**ՍՏԵՓԱՆ ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ**

Կ Ո Շ Կ Ա Ս Կ Ա Ր

Մուսալլա, հաճի Հասան աղաթ օթէլին տակ

—X—

Ճաշակաւոր, տոկուն, ձեւաւոր կոշիկ շինել տալ ուղղը պէտք է գիմէ Պ. Ստեփան Խօրասանճեանի, որուն ճարտարութիւնը մէկ վորձով երեւան կելլայ :

Գիներ գիւրամասչելի :

**ՃԱՇԱՐԱՆ ԵՒ ԶՐՕՍԱՐԱՆ**

—X—

ՀԱՅԻ ԲԱՆԱԳՈՒՆ ՃԻՇԻ ԴԵՄԸ Կը բանեցուցէ Պ. Տիգրան Թիւֆեկիւնեան և ընկեր

Արհեստին մէջ կատարելութեան հասած երիտասարդ հայու մը ձեռամբ սարքուած այս հովասուն, մաքուր ու զեղջակաւ հաստատութիւն ոչ միայն պատիւ կը բերէ հայ ճաշակին, այլ և մեծ խթան մը կը ըլլայ որ հայ ու օտար փափկակերներ իրենց զարնանային ու ամառնային ժամադրաւոր մը ընեն զայն զբօսելու և ճաշելու, Պոնտոսեան ախորժակի հովերուն ու Սեւ ծովի կապոյտ արածութեան առջեւ :

Հակառակ այս հրապուրիչ առակելութիւններուն, յաճախորդները պիտի գտնեն յոյժ զիւրաքանչիւր գիներ թէ ըմպելիքի թէ կերակուրիչ ըստին :

**« Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ »**

Վառնաի մէջ կը վաճառուի Մուսալլա, թանկագ կէտիպէտիւքանի խանութը, և Ապուլլահ փաշան միջկիթին դէմը հայկական գրատուր, Ա. Զարբանէլեանի քով :

**ԽՄԱԿԴՐՈՒԹԻՒՆ, ՇԱՐՃՈՒՄ**

—(—)

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեւորման, հասցեւորման, նամակագրութիւն, հարստանեկան հրատարակիչ, մահալդ, ինչպէս նաև պըրձիւններ :

Գիներն յոյժ գիւրամասչելի : Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին :